

Սույն ժողովածուն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը 1999-2003թթ. միջակայքում՝ Հայաստանի Հանրապետության մարզերի կտրվածքով:

1995 թվականից՝ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրապետության տարածքը բաժանված է 11 մարզի, այդ թվում ք. Երևանը՝ մարզի կարգավիճակով: Հայաստանի Հանրապետությունում առկա են 47 քաղաք և 951 գյուղական բնակավայրեր, որոնցից 9-ը ներառված են քաղաքային համայնքների կազմի մեջ, իսկ մնացած գյուղերը՝ 870 գյուղական համայնքներում:

Սույն հրապարակումը նախատեսված է վիճակագրական տեղեկատվություն սպառողին (օգտագործողին) ներկայացնել մանրամասն վիճակագրական տեղեկատվություն տարածաշրջանային (ռեգիոնալ) կտրվածքով:

Ժողովածուն նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար:

Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ սույն հրապարակման մեջ ճշգրտված են:

Հասցե՝ 375010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,

Կառավարական տուն, թիվ 3

<http://www.armstat.am>

E-mail: [armstat @ sci.am](mailto:armstat@sci.am)

Fax 521 921

հեռ. 523 356

## ***Պայմանական նշաններ***

-	երևույթը բացակայում է
...	տվյալները բացակայում են
0.0	չնչին մեծություն
✧	տվյալները ճշգրտված են

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

## ***Համառոտագրություններ***

մ	մետր
մ <sup>2</sup>	քառակուսի մետր
մ <sup>3</sup>	խորանարդ մետր
կմ	կիլոմետր
կմ <sup>2</sup>	քառակուսի կիլոմետր
կգ	կիլոգրամ
տ	տոննա
հա	հեկտար
հազ.	հազար
մլն.	միլիոն
մլրդ.	միլիարդ
կՎտ	կիլովատտ
տոննա-կմ	տոննա-կիլոմետր
%	տոկոս
մ.թ.ա.	մեր թվարկությունից առաջ



Հայաստանը, որպես հնագույն քաղաքակրթության բաղկացուցիչ մաս, հայտնի է պատմությանը վաղագույն ժամանակներից: Հայաստանի հնագույն շրջանի տարածքի և վարչական բաժանման վերաբերյալ հիշատակություններ են կատարել Հերոդոտը, Քսենոֆոնը, Ստրաբոնը և հայտնի այլ հեղինակներ:

Մելեվկյան տիրապետության ժամանակներից սկսած (IV-II դար մ.թ.ա.) հայաբնակ բոլոր շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորի՝ Փոքր Հայք, Ծովք և Մեծ Հայք, որոնք մ.թ.ա. II դարում դարձան անկախ պետություններ: Դրանց մեջ ամենից գորեղը Մեծ Հայքի պետությունն էր, որտեղ մ.թ.ա. II դարից մինչև մ.թ. V դարը նախ թագավորում էին Արտաշեսյանները, ապա Արշակունիները:

Մեծ Հայքը, վարչական առումով, Արտաշեսյանների թագավորության շրջանում բաժանվում էր գորավարությունների ու բղեշխությունների, իսկ Արշակունիների օրոք՝ նախարարությունների ու բղեշխությունների: Հետագայում Սասանյանների, Արաբական խալիֆայության, Բագրատունիների թագավորության, սելջուկների տիրապետության շրջանում և հետագա դարերում երկրի ներքին վարչատարածքային բաժանումներն ըստ էության բազմաթիվ անգամ ենթարկվում են փոփոխությունների: Սակայն դարեր շարունակ պատմագիրների ու աշխարհագիրների մոտ գործածության մեջ է մնում Մեծ Հայքի տարածքային այն բաժանումը, որը տրվում է Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում:

Ըստ «Աշխարհացույց»-ի, Մեծ Հայքը բաղկացած էր 15 աշխարհներից, որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ: Այդ «աշխարհները» հետևյալներն էին. Տայք, Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորճեք, Մոկք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Տուրուբերան, Վասպուրական և Այրարատ, որը ամենահայտնի «աշխարհն» էր, որպես քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն:

Նոր և նորագույն ժամանակներում պատմական Հայաստանի տարածքը բաժանված էր արևմտյան և արևելյան հատվածների, որոնք ընդգրկված էին Օսմանյան Թուրքիայի և Իրանի (1828 թվականից Ռուսաստանի) կազմում: Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքը բաժանված էր 37 շրջանների:

Հայաստանի Հանրապետության ներկա վարչատարածքային բաժանումը՝ 10 մարզ և Երևան քաղաքը մարզի կարգավիճակով, ձևավորվել է 1995 թվականին՝ համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի: